ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 07.10.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը հաստատության յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագիծը՝ ամենամյա ծախսերի նախահաշիվը, ներկայացնում է հաստատության խորհրդի քննարկմանը և վերջինիս կողմից հավանություն տալուց հետո ներկայացնում լիազորված մարմին: Տնօրենի՝ հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարման, օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական միջոցների տնօրինման լիազորությունների շրջանակում իրականացվել են մարզադահլիճի մասնակի բարեկարգման, մասնավորապես՝ պարբերաբար կոտրվող ապակիների փոխարինման, հատակի ամբողջականության վերականգմանը միտված աշխատանքներ:

Հարկ է նշել, որ «Երևանի հ.157 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենության կողմից ներկայացված՝ շենքային պայմանների, այդ թվում՝ մարզադահլիճի անբարեկարգ լինելու վերաբերյալ տեղեկատվության հիմքով ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ նախատեսված է դպրոցի վերակառուցում, հետևաբար առանձին խնդիրների լուծման համար չեն կարող նախատեսվել կապիտալ ծախսեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ